

Անուն----- Թուական-----

«Շատ Պզտիկ Ոչխարը»

Բառագիտութիւն

Նախադասութիւնները ամբողջացո՛ւր յարմար բառերով:

Կեռասենի – ոռնաց – թուփ – գաղտնի – կը խոստանամ – կը խուզէ – հրէշ –

Վստահ –

1-Հայ աշակերտը ամէն առտու կ'ըսէ. «-----պահել մայրենի լեզուս եւ մշակոյթս»:

2-Մեր պարտեզի ----- ն համով պտուղներ տուաւ:

3-Հովիւը ----- ոչխարներուն բուրդը, որ մենք տաք հագուստ ունենանք:

4-Չալուկը պահուըտեցաւ -----ի մը ետեւ, որպէսզի գայլը զինք չտեսնէ:

5-Մեր շունը գայլի նման -----:

6-Գայլը կարծեց, թէ ----- մը խաճաւ իր պոչը:

7-Դասս այնքան լաւ սորվեցայ, որ ----- եմ՝ լաւ նիշ պիտի առնեմ:

8-Մեր ուսուցչուհիէն -----՝ որոշեցինք անակնկալ մը ընել:

Գրէ՛ կենդանիին հանած ձայնը:

1-Ոչխարը -----:

2-Շունը -----:

3-Կատուն -----:

4-Թռչունը -----:

5-Կովը -----:

Հասկացողութիւն

Պատասխանէ՛ հետեւեալ հարցումներուն յիւ նախադասութիւններով:

1-Չալուկը ինչո՞ւ տխուր էր:

2-Չալուկը երեք ձեւ փորձեց, որ «ինքզինքը մեծցնէ»: Բացատրէ՛:

Ա-----

Բ-----

Գ-----

3-Չալուկը ինչպէ՞ս ազատեց իր ընկերները:

4-Չալուկը ինչո՞ւ «մեծցած կը զգար» պատմութեան վերջաւորութեան:

Քերականութիւն

Շրջագծէ՛

Անձ ցոյց տուող 3 անունները:

Գայլ մայր ոսկի աշակերտ սեղան ուսուցիչ

Կենդանի ցոյց տուող 3 անունները:

Ոչխար ընկեր զինուոր ծուկ խնձոր կատու

Առարկայ կամ բան ցոյց տուող 3 անունները:

Կրիայ հագուստ գուլպայ լեռ դպրոց սառոյց

Տեղ ցոյց տուող 3 անունները:

Եկեղեցի մատիտ եղբայր տուն Հայաստան առիւծ